# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԳԻԼԳԱՄԷՇԻ ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

### ՏԱԽՏԱԿ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

1. — «Ո՜հ, այսօր ձգեցի թմբուկը ատաղձագործի տան մէջ,
2. — ո՜հ, ձգեցի զայն ատաղձագործի կնոջ մօտ, որ ինծի համար մօր մը պէս էր, որ զիս ծնաւ[!]
3. — ո՜հ, ես ձգեցի զայն ատաղձագործի դուստրին մօտ, որ ինծի համար պզտիկ քրոջս (նման) էր.
4. — հիմա, ո՞վ պիտի բերէ թմբուկը ստորերկրեայ աշխարհէն.
5. — ո՞վ պիտի բերէ (թմբկի) ճարիչը(95) ստորերկրեայ աշխարհէն։
6. — Էնկիդուն ըսաւ անոր՝ Գիլգամէշին. իր տիրոջ.
7. — «Տէր իմ ինչո՞ւ կ'արտասուես, ինչո՞ւ քու սիրտը հիւանդ է.
8. — այսօր պիտի հանեմ թմբուկը ստորերկրեայ աշխարհէն,
9. — պիտի հանեմ (թմբկի) ճարիչը ստորերկրեայ աշխարհէն»։
10. — Գիլգամէշ ըսաւ անոր, Էնկիդուին՝ իր ծառային.
11. — «Եթէ այսօր պիտի իջնես ստորերկրեայ աշխարհը,
12. — [խօսք մը պիտի խօսիմ քեզի, հետեւէ խօսքիս].
13. — ազդարարութիւն[ներ]ուս [լաւ ուշադրութիւն ըրէ]։
14. — [Մի] հագուիր մաքուր զգեստ,
15. — անոնք պիտի նկատեն քեզ] իբրեւ նժդեհ մը.
16. — մի օծուիր թանկագին իւղով օծանելիքի տուփէն,
17. — անոր բուրումէն անոնք պիտի հաւաքուին քու շուրջը.
18. — մի նետեր տապալելու գաւազան մը ստորերկրեայ աշխարհ,
19. — անոնք որոնք զարնուած են տապալելու գաւազանով մը, պիտի շրջապատեն քեզ.
20. — գաւազան մը մի առներ ձեռքերուդ մէջ,
21. — ոգիները պիտի դողդղան քու առջին.
22. — հողաթափներ մի հագնիր ոտքերուդ.

(95) Տե՛ս Ancient Near Eastern Texts, James B. Pritchard, էջ 97։

---

եակ և Համազասպ Մամիկոնեան երեք եղբայրներէն։

Իր աշակերտները և իրեն հետեւող նախարարները մարմինը մեծաթափօր հանդէսով տարին մինչև Տարօնի Աշտիշատ գիւղը, իր ծննդավայրը, ուր հանգչեցաւ ան եկեղեցիին մէջ։

Միսրոպ վեց ամիս ևս շարունակեց Սահակի հետ սկսուած գործը, Վաղարշապատի մէջ, ուր և վախճանեցաւ։

Հայոց հազարապետը ուզեց որ Սուրբին մարմինը ամփոփուի Օշական գիւղը, որ իր սեփականութիւնն էր։ Յուղարկաւորութեան փառաւորութիւնը Միսրոպի վաստակին չափով էր, անսահման։ Նախարարներ, զինուորական և աւագանի, եկեղեցական բոլոր կարգերէն ներկայացուցիչներ և ծովածաւալ բազմութիւն մը ժողովուրդի, եկեղեցական երգեցողութեամբ տարին մարմինը Վաղարշապատէն մինչև Օշական, ուր կը հանգչի Միսրոպի գերեզմանը մինչև այսօր։

Որքան փառաւոր, սակայն նոյնքան տխուր եղան Սահակի և Միսրոպի վերջին տարիներն ու վախճանը, որովհետև վերցած էր այլեւս Արշակունեաց գահը և մարած Լուսաւորչի սերունդը։ Անկախութիւնը փոխած էր իր զրահը և հայ ժողովուրդի պահպանութեան և հայկականութեան զինամթերքը փոխած էր իր մետաղը։ Յունական և պարսկական դարաւոր գերիշխանութեան դիմաց դժուարացած էր սուրի յեղափոխութիւնը, բայց սկսուած աւելի լուռ, խորունկ և իրական պայքար մը, որուն զրահն էր հայոց լեզուն և սուրը՝ ազգային գիտակցութեամբ փայլած Հայու Հոգին։

Ամենէն իրական մխիթարութիւնը Աշտիշատի և Օշականի գերեզմաններուն դիմաց թագաւորէ զրկուած և կաթողիկոսէ պարպուած երկրին վրայ՝ Ոգին էր պատմահայրին՝ Խորենացիին, Ոգի մը, հայերէն գըրուած առաջին պատմութիւնը պսակող, որ յուսահատութենէ աւելի, ապագայակոչի նմանեցաւ։

(Վերջ՝ 4) ՇԱՀԷ ՎՐԴ. ԱՃԷՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@

23. — ձայն մը հանէր ստորերկրեայ աշխարհին մէջ,
24. — քու կինը, զոր կը սիրես, մի համբուրեր.
25. — քու կինը, զոր կ'ատես, մի զարներ.
26. — քու զաւակը, զոր կը սիրես, մի համբուրեր.
27. — քու զաւակը, զոր կ'ատես, մի զարներ.
28. — ստորերկրեայ աշխարհի կոծը պիտի գրաւէ քեզ։
29. — Ան որ կը հանգչի, ան որ կը հանգչի, Նինազուի մայրը, ան որ կը հանգչի։
30. — Անոր սուրբ ուսերը զգեստով ծածկուած չեն.
31. — անոր սկահանման կուրծքը չէ ծածկուած կտաւով։
32. — Էն[կիդուն] ուշադրութիւն [չ]ընծայեց [իր տիրոջ խօսքին].
33. — [ան հա]գուած էր [մաքուր զգեստ մը].
34. — զինքը [նկա]տեցին իբրև նո[րեկ մը].
35. — [անիկա օծ]ուած էր [թանկագին] իւղով օծանելիքի տուփէն.
36. - [անոր] բոյրէն [հա]ւաքուեցան անոր շուրջ.
37. — [նետեցին] տապալելու գաւազան մը [ստորերկրեայ աշխարհին մէջ].
38. — անոնք որոնք [զարնուած էին] տապալելու գաւազանով [շրջապատե]ցին զինքը.
39. — [առաւ] գաւազան մը [իր] ձեռքը.
40. — հողաթափ մը [հագաւ իր ոտքերուն].
41. — ձայն մը [հանեց] [ստորերկրեայ աշխարհին մէջ].
42. — իր կինը, [զոր կը սիրէր, համբուրեց].
43. — [իր կինը, զ]որ կ'ա[տէր, զարկաւ].
44. — [իր զաւակը, զ]որ կը սիրէր, [համբուրեց].
45. — [իր] զաւակը, զոր կ'ատէր, զար[կաւ].
46. — ստորերկրեայ աշխարհին կո[ծը] գրաւեց զինքը,
47. — ան որ կը հանգչի, [ան որ կը հանգ]չի, Նինազուի մայրը, ան որ կը հան[գչի].
48. — [իր] սուրբ ուսերը զգեստով ծածկուած չեն.
49. — իր սկահանման կուրծքը կտաւով ծածկուած չէ.
50. — ան [չ]ձգե[ց] Էնկիդուն ստորերկրեայ աշխարհէն վեր գալու.
51. — Նամ[տարը չբռ]նեց զինքը, հիւանդութիւնը չբռնեց զինքը, ստորերկրեայ աշխարհը [բռնեց զ]ինքը.
52. — չաայլ պատ[ուիրակը Ներգալի] չբռնեց զինքը, ստորին աշխարհը [բռնեց զ]ինքը.
53. — մարդոց [մարտա]դաշտին վրայ ան չինկաւ, ստորին աշխարհը [բռնեց զ]ինքը.
54. —[...] [տէ]ր իմ, Նինսունի որդին կ'արտասուէ իր ծառային՝ Էնկիդուի վրայ.
55. — դէպի [Էկուր]՝ Էնլիլի [տաճարը], գնաց առանձին.
56. — «Հայր [Էնլիլ], այն օրը որ իմ թմբուկը ստորերկրեայ աշխարհ ինկաւ,
57. — իմ (թմբկի) հարիչը ինկաւ ստորերկրեայ աշխարհ,
58. — Էնկիդուն զոր [ղրկեցի] [զանոնք] վեր բերելու, [ստորին աշխարհը բռնեց զինքը].
59. — Նամտարը զինքը չբռնեց, հիւանդութիւնը զինքը չբռնեց, ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց.
60. — չաայլ պատուիրակը Ներգալի չբռնեց զինքը, ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց.
61. — մարդոց մարտադաշտին վրայ ան չինկաւ, ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց։
62. — Հայր Էնլիլը անոր բառ մը չպատասխանեց, ան գնաց [դէպի Ուր]։
63. — «Հայր Սին, այն օրը որ իմ թմբուկը ինկաւ ստորերկրեայ աշխարհ,
64. — իմ (թմբկի) հարիչը ինկաւ [ստորերկրեայ աշխարհ],
65. — Էնկիդուն, զոր [ղրկեցի] [զանոնք] վեր բերելու, ստորերկրեայ աշխարհը բռնեց զինքը.
66. — Նամտարը չբռնեց զինքը, հիւանդութիւնը չ[բռնեց] զինքը, ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց.
67. — չո[այլ] պատուիրակը Ներգալի [չբռնեց զինքը, ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց].
68. — [մարդոց] [մարտա]դաշտին վրայ ան չինկաւ, [ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց]»։

digitised by A.R.A.R.@

69. — [Հայր Սին անոր բառ մը չպատասխանեց], [ան գնաց դէպի Երկինք]։

70. — «Հայր Էա, այն օրը որ իմ իմբուկը ստորերկրեայ աշխարհ ինկաւ,

71. — իմ (իմբկի) հարիչը ստորերկրեայ աշխարհ ինկաւ,

72. — Էնկիդուն զոր ղրկեցի զանոնք վեր բերելու ստորերկրեայ աշխարհը բռնեց զինքը.

73. — Նա[մտարը զինքը չբռնեց, հիւանդութիւնը զինքը չբռնեց, ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց].

74. — չռայլ պատուիրակը Ներգալի [չբռնեց զինքը], ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց.

75. — մարդոց մարտադաշտին վրայ [ան չինկաւ], [ստորերկրեայ աշխարհը զինքը բռնեց]»։

76. — Հայր Էան [երբ ասիկա լսեց],

77. — [ըսաւ] [Ներգալ]ին՝ արիասիրտ հ[երոս]ին.

78. — «Նե[րգալ, դուն արիասիրտ հերոս ...

79. — ծակ մը [բաց] անմիջապէս [ստորերկրեայ աշխարհին մէջ],

80. — որպէսզի [Էնկիդու]ի հոգին [դուրս ելլէ ստորերկրեայ աշխարհէն],

81. — [որ ան յայտարարէ ստորերկրեայ աշխարհի ուղիները] [իր] եղբօր»։

82. — Ներգալ՝ արիասիրտ հերոսը, [անսաց Էայի].

83. — հազիւ թէ ծակ մը բացաւ ստորերկրեայ աշխարհին մէջ,

84. — երբ Էնկիդուի հոգին, հովի մը պէս, դուրս ելաւ ստորերկրեայ աշխարհէն,

85. — գիրար գրկեցին և համբուրեցին,

86. — իրարու հետ խորհրդակցեցան, հառաչելով իրարու։

87. — «Ըսէ ինծի, իմ բարեկամ, ըսէ ինծի, իմ բարեկամ,

88. — ըսէ ինծի կարգը ստորերկրեայ աշխարհին զոր դուն տեսար»։

89. — «Պիտի չըսեմ քեզի, բարեկամ իմ, պիտի չըսեմ քեզի,

90. — (բայց) եթէ ըսեմ քեզի ստորերկրեայ աշխարհի կարգը. զոր ես տեսայ,

91. — Նստէ (և) արտասուէ»։

92. — «[...] պիտի նստիմ և արտասուեմ»։

93. — [իմ մարմինը ...], որուն դուն հպար, մինչ քու սիրտը կը բերկրէր,

94. — զարշաճճիք (զայն) կը փչացնեն, (կարծես թէ) հին [զգ]եստ մը ըլլար.

95. — [իմ մարմինը ...], որուն դուն հպար, մինչ քու սիրտը կը բերկրէր,

96. — [...] փոշիով լեցուած է»։

97. — Ան «[վայ]» պոռաց և նետեց ինքզինքը [փոշիին մէջ].

98. — [Գիլգամէշ] «[վայ]» պոռաց և նետեց ինքզինքը [փոշիին մէջ].

99. — «[... տեսա՞ր]», «Տեսայ»։

100–101. — (գրեթէ բոլորովին փճացած)։

102. — ... «տեսայ».

103. — ... «կ՚արտասուէ (անոր) վրայ».

104. — ... «տեսայ».

105. — ... «հաց կ՚ուտէ».

106. — ... «տեսայ».

107. — ... «ջուր կը խմէ».

108. — ... «տեսայ».

109. — ... «իր սիրտը կը բերկրի».

110. — ... «տեսա՞ր», «տեսայ».

111. — «լաւ [գպիրի] մը [նման], իր բազուկը մերկ է».

112. — ... «ապարանք կը մտնէ».

113. — ... «տեսա՞ր», «տեսայ».

114–117. — (փճացած)

118. — «գեղեցիկ դրօշի մը պէս».
(26 տող փճացած)

145. — «Ան որ [ինկաւ] կայմէն, տեսա՞ր (զինքը)», [«տեսայ զինքը»].

146. — «հազիւ թէ ... եփիթները քաշուած են»։

147. — «Ան [որ մեռաւ] մահովը ... տեսա՞[ր] (զինքը)», «[տեսայ զինքը]»։

148. — «Ան կը հանգչի գիշերային բազմոցի մը վրայ և ջինջ ջուր կը խմէ»։

149. — «Ան որ սպաննուած էր մարտի մէջ, տեսա՞ր (զինքը)», «տեսայ զինքը»։

150. — «Իր հայրը և իր մայրը կը բարձրացնեն անոր գլուխը և իր կինը [կ՚արտասուէ] անոր վրայ»։

151. — «Ան որուն դիակը նետուած էր արձակադաշտի վրայ, տեսա՞ր (զինքը)», «տեսայ (զինքը)».

152. — «անոր հոգին չի հանգչիր ստորերկրեայ աշխարհին մէջ»։

153. — «Ան որուն հոգին մէկը չունէր զինքը խնամելու, տեսա՞ր», «տեսայ զինքը»։

154. — «Ինչ որ ամանին մէջ մնացած էր, հացի պատառները, որոնք փողոց նետուած էին, կ՚ուտէ»։

155. — Տասներկուերորդ տախտակ, «Ան որ տեսաւ ամէն ինչ»ի։

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ՋՂՋԱՆԵԱՆ

(Վերջ՝ 17)

digitised by A.R.A.R.@